



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2014 թվականի N 1072-Ն
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 436-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի <<Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին>> N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածում՝

1) 11-րդ և 12-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<11. Սույն կարգի 9-րդ կամ 10-րդ կետով նախատեսված անձի մասին խորհուրդը քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին, իսկ Հայաստանի Հանրապետության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին տեղեկացնում է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ այդ մասին համապատասխան տեղեկություն հրապարակելով խորհրդի աշխատակազմում տեսանելի ցուցանակի վրա:

12. Սույն կարգի 11-րդ կետով նախատեսված տեղեկացումն ստանալու օրը համապատասխան մարմինը համապատասխան տեղեկություն է հրապարակում

տեսանելի ցուցանակի վրա և սույն կարգի 9-րդ կամ 10-րդ կետով նախատեսված անձին տեղեկացնում է ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու համար եռօրյա ժամկետում համապատասխան մարմնի աշխատակազմ ներկայանալու անհրաժեշտության մասին:»>.

2) 14-րդ կետի երկրորդ պարբերության <<ժամկետային աշխատանքային պայմանագիր>> բառերը փոխարինել <<Պայմանագիր>> բառով.

3) 18-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ <<ե>> ենթակետով.

<<ե) եթե Պայմանագրով պաշտոն զբաղեցնող անձը մասնակցել է տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթին և հաղթող չի ճանաչվել:»>.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 21-րդ և 22-րդ կետերով.

<<21. Չի թույլատրվում անձի հետ կնքել Պայմանագիր այն պաշտոնը զբաղեցնելու համար, որից տվյալ անձն ազատվել է սույն կարգի 18-րդ կետի <<ե>> ենթակետով նախատեսված հիմքով:

22. Պայմանագրում, քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում փոփոխություններ կարող են կատարվել կողմերի միջև գրավոր համաձայնագիր կազմելու միջոցով, որը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:»>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Մ. ԲԱԴԱԼՅԱՆ